ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 28 » փետրվարի 2019 թվականի N: 32 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N:19 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԻՆԵ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի դատախազի 2019 թվականի փետրվարի 1-ի N:64/22-8-19 միջնորդագիրը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2019 թվականի փետրվարի 11-ի N:01/10/1727-19 առաջարկությունը, անհիմն համարելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N :19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մեսրոպյանի 2019 թվականի փետրվարի 15–ին տրված բացատրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N:19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մեսրոպյանին 2019 թվականի մարտի 1–ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2017 թվականի փետրվարի 1-ին կնքված N:18 աշխատանքային պայմանագիրը:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝